Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
դեկտեմբերի 11-ի նիստի N 52
արձանագրային որոշման

Հ ՈՒ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

__ _____ 2014 թ.
քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը ՝ ի դեմս նախարար Գ.Բեգլարյանի և Իրանի Իսլամական Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը՝ ի դեմս նախարար _____, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկու երկրների միջև առկա բարեկամական հարաբերությունները ինչպես նաև կապի, ինտերնետի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերը պետությունների զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տեղեկատվության մատչելիության գործում,

նպատակ ունենալով ամրապնդել Նախարարությունների միջև համագործակցությունը,

ցանկանալով համագործակցել կապի, ինտերնետի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում առկա խնդիրների լուծման, ինտերնետ տրաֆիկի փոխանցման, գիտատեխնոլոգիական ոլորտում տեղեկատվության տրամադրման հարցերում:

Կողմերը համաձայնեցին համագործակցել հետևյալ ուղղություններով.

1. Կողմերի միջև առկա կապուղիների միջոցով երրորդ երկրին միջազգային <<ԱՅՓԻ» (IP) տարանցման ծառայությունների մատուցման հնարավորության ապահովման.
2. Կողմերի միջև երկկողմ միջազգային <<ԱՅՓԻ>> (IP) տարանցման ապահովում և թողունակության անսահմանափակ հնարավորության ստեղծում,
3. ՏՀՏ ոլորտում համատեղ հետազոտությունների իրականացում և ծրագրերի մշակում՝ ներառյալ հետազոտության արդյունքների և դրանց առընչվող տեղեկատվության փոխանակում:
4. ՏՀՏ ոլորտի մասնագետների և փորձի փոխանակման, հնարավորություն ընձեռող համատեղ ծրագրերի մշակում,
5. տեղական և տարածաշրջանային ինտերնետ փոխանակման կետերի և տվյալների կենտրոնների ստեղծում:

6. Կողմերի աշխարհագրական դիրքի առավել արդյունավետ օգտագործմամբ՝ մալուխային ցանցի ստեղծում:

7. սույն Հուշագրով սահմանված համագործակցության իրավական և կազմակերպչական ուղղությունների շրջանակներում անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրում և (կամ) փոխանակում:

8. Յուրաքանչյուր տարվա համար Կողմերը կարող են հաստատել նաև թիրախային (հասցեական) աշխատանքային ծրագրեր:

Սույն Հուշագրի դրույթների իրագործման համար Կողմերը կարող են ստեղծել աշխատանքային խմբեր, կազմակերպել համատեղ խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ, համատեղ թեմատիկ սեմինարներ:

Սույն Հուշագրի գործողության շրջանակներում իրականացվող հանդիպումների օրակարգը, վայրը, օրերը և այլ հարցերը, կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություն կողմերից որևէ մեկի համար:

Կողմերը ապահովում են ստացված տեղեկատվության գաղտնիությունը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմի երկրում գործող օրենսդրության պահանջների:

Սույն հուշագրի դրույթների իրականացման նպատակով կողմերը կարող են կնքել համաձայնագրեր:

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և կնքվում է անորոշ ժամկետով:

Սույն Հուշագիրը կատարված է ---------- 2014 թ. ----------, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներով. բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն հուշագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տարբերակին:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար	**Իրանի Իսլամական Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար**